հաճի ընդ այս, և մատուցեալ բազմակնիք հանրագիր ինչ 'ի դիմաց ազգի իւրեանց՝ ասեն, խնդիր արկանէ ազգն առաջի մեծութեան ձերոյ՝ ընթեռնուլ և իմանալ զայս գիր։ Դատաւորք ասեն՝ զի՞նչ է այն, Ցոյնք ասեն՝ հանրագիր յազգէն առ Տէրութիւն ձեր. Դատաւորք՝ զի՞նչ կամիք ասել՝ ասացէք, զի ոչ ընթեռնանի այդ գիր. Ցոյնք ասեն՝ ոչ կարեմք խօսիլ՝ այլ ընթերցցի և ծանիցի։ Դատաւորք ասեն՝ ո՞չ ապաքէն դուք գրեալ էք զդա, որպէս գրեցիք՝ նոյնպէս բանիւ ասացէք զի իմասցուք։ Ցոյնք՝ չէ արժան մեզ խօսիլ։ Դատաւորք՝ եթէ ոչ կարէք խօսիլ զգրեալսն 'ի միջի դորա, ընդէ՞ր բերիք։ Քեահեայ Պէյն ասէ՝ եթէ կորուսեալ էր ձեր զդա 'ի ճանապարհի, զի՞նչ ունէիք ասել, այժմ ասացէք՝ զոր ինչ եղեալ էք 'ի մտի, եւ այլ սոցին նման բանք բազում։ Դենպետն ասէ բարկութեամբ, ընդէ՞ր տայք խօսիլ դոցա, զի ամենայն ինչ ըստ հրամանի Արքային պարտ է կատարիլ։ Ոմանք յԱտենակալաց յորդորէին զՑոյնս 'ի հնազանդութիւն, և ոմանք բարկութեամբ սաստէին և յանդիմանէին, խնայեցէք 'ի ձեզ ասէին՝ զի յօժարութեամբ ձերով պատժոյ ցանկայք։ Եւ յետ այսքան վիճաբանութեան՝ թեւարկողն Ցունաց Իզզէթ Պէյ՝ խորհելով ընդ Դենպետին եւ ընդ Տեղապահին՝ ասէ, արժան է ձեզ զայս խնդիր առանձին տնօրինել և զԱտեանն արձակել, զի փոքու իմն գուցէ մարդ վնասեսցի 'ի Ցունաց։ Հաճոյ թուեցաւ այս բան Տեղապահին՝ զի ջատագով էր Ցունաց, եւ ասէ՝ 'ի վաղիւ անդր Ցոյնք զգիրս Օմարայ և Սէլիմայ, նոյնպես և Հայք զհրովարտակն Սէլիմայ բերցեն առ Բէյիզ Էֆէնտին, և մեր բաղդատեալ զնոսա ընդ միմեանս՝ գտցուք զմիջին ճանապարհն, և կատարեսցուք զհրաման Արքայի. փակեցաւ Ատեանն։ Հայք և Ցոյնք 'ի միում աւուր տարեալ մատուցին զհրովարտակսն առ Բէյիզ Էֆէնտի, եւ Նախարարք երկար քննութեամբ՝ զի մի խսպառ ստոր անկցին Ցոյնք՝ որպէս թէ գտեալ լցեն զմիջին ճանապարհն, գրեցին օրինակ ինչ հրովարտակի և առաքեցին առ Արքայ։ Իսկ նորա տեսեալ թէ միտք Նախարարաց հաստատեալ է ոչ 'ի կողմն իրաւանց՝ այլ 'ի հաճել զմիտս Ցունաց, նմին իրի սրբագրեալ փոխեաց զգիրն և այնպէս դարձոյց յետս,